



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




85
4-40



Ք. ՍԵՆՏ-ԻԼԵՐԻ

ՆՈՒՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Еах



ԹԱՐԳԱ. ԽՈՒՍԵՔՆԻՑԻՑ



30 MAY 2011

ՎԱԻԿԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

85.

U-40

"յ."

Ք. ՍԵՆՏ-ԻԼԵՐԻ

ԲՈՒԺ

1002
1010

✓

ԹԱՐԳԱ. ԹՈՒՍԵՐՆԻՑ




Ա-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՀՊԱՀԿԱՆԵՐՆ ՏՊԱՐԱԿ


1903

30.07.2013

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 20 Мая 1903 года.



„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.



ԲՈՒ



մբողջ գիշերը Բուն չքննեց. այլ
թռաւ, խեղճ թռչուններին բներում
վախեցրեց, երեք ձագուկներին
կտցահարեց, մոխրագոյն մկնիկին
էլ գաշտումը բռնեց և այդ բոլորին
էլ կերաւ: Մինչև անգամ փոքրիկ
նապաստակի յետեկից էլ վազեց և ուզում՝ էր յա-
փրշտակել նրան իւր շանկուղ թաթերով. բայց
նապաստակիկը խորամանկ էր. թագնուեց վշտ
թփի տակ, որտեղից բռնիկը ոչ մի կերպ չկա-
րողացաւ նրան դուրս քաշել:

Առաւօտեան բռն կերաւ, կշտացաւ և սկսեց
որոնել մի մութ տեղ, ուր կարողանար քնել: Նա
որոնեց, որոնեց և վերջապէս հին կաղնու ընի
մէջ գտաւ մի փոքրիկ խոռոչ, որ կտցահարը վա-

զուց փորել էք իւր քնի համար: Բուն մտաւ այդ
խոռոշի մէջ, մի քիչ շուռ ու մուռ եկաւ, թևերը
թափ տուեց և ապա փակեց աշքերն ու մտա-
ծեց.—Այ, այստեղ ես լաւ կըքնեմ, ոչ ոք ինձ
չի խանգարի:

Եւ իսկապէս նա շուտով քնեց:

Այդ ժամանակ արեգակը դուրս եկաւ: Թըռ-
չուններն ու գագանները անտառում արթնացան
և սկսեցին ուտելիք որոնել: Բուն դեռ ես քնած
էք. բայց մի բարձր տգտգոց շուտով արթնացը եց
նրան. ինչ ոք բան շարժուեց ուղիղ նրա կտուցի
տակ: Բուիկը զարթնեց, բացեց աշքերը և տե-
սաւ որ խոռոշում մեղուները թռչում են և բարձր
տգտգում: Բուն բարկացաւ, երկու մեղու բռնեց
իւր սուր կտուցով և մի ակնթարթում կուլ տուեց:
Մնացած մեղուները սկսեցին աւելի բարձր տրգ-
տլզալ:

—Ի՞նչ չարն ես դու, ասացին նրանք. ին-
չու սպանեցիր մեր երկու քոյրերին:

—Իսկ դուք ինչու էք թռչում այստեղ և
քունս խանգարում: Հեռացէք այստեղից. ապա
թէ ոչ բոլորիդ էլ կուլ կլտամ:

—Մենք գործով ենք թռչկոտում, պատաս-
խանեցին մեղուները. մեր փեթակում արդէն նե-
ղուածք է. նոր փեթակի համար տեղ ենք որո-
նում, ուստի մտանք այս խոռոշը. բայց սա ան-
պէտք է. մուտքը շատ լայն է, մեծ աշխատանք
է հարկաւոր նրան փոքրացնելու համար, խոռոշն




Էլ շատ նեղուածք է: Եթէ այսպէս չլինէր, մենք
քեզ այստեղից դուրս կանէինք: Կըմտնէինք փե-
տուրներիդ մէջ և կըսկսէինք խայթել, այն ժա-
մանակ դու դուրս կըթռչէիք: Ապա, քոյրիկներ,
հիմա հաւաքուեցէք և թողէք հանգիստ քնելու
այս չար պառախն:

Մեղուները թոան, իսկ բուն երկար փընթ-
փընթաց ու քնեց: Բայց գեռ քառորդ ժամ չէր
քնել, երբ ականջի տակ յանկարծ լսուեց մի
բարձր ձայն կու-կու, կու-կու:

Բուն սաստիկ բարկացաւ, որ իրեն նորից
զարթեցրին. դուրս նայեց և տեսաւ, որ հինգ
խոռոչի մօտ, ճիւղի վրայ նստած է մի երկայնա-
պոչ, մոխրագոյն թռչուն և բոլոր ուժով բղա-
ւում է:

—Ո՞վ է այդպէս բարձր բղաւում:
—Ես եմ, մոխրագոյն կկուն:
—Ի՞նչ ես ուզում, ի՞նչու ես բղաւում:
—Չափուկներիս եմ կանչում:
—Իսկ ձափուկներդ ո՞րտեղ են, ինչո՞ւ նրանք
քեզ հետ չեն:
—Ես ուրիշների բներումն եմ ձու ածում
և իմ ձափուկներին ուրիշներն են կերակրում.
Իսկ հիմա ձափուկներս մեծացել են, ես նրանց
կանչում եմ կանչում, բայց նրանք ճանաշել
անգամ չեն ուզում ինձ:
—Տեղն է քեզ, մոխրագոյն կկու, ինչո՞ւ ինքդ
չմեծացրիր ձափուկներիդ: Միւս բոլոր թռչուն-



ները իրանք են նստում իրանց ձուաների
վրայ։ Այ, ինձ, բուիկիս անուանում են չար
թոշուն, բայց ես ինքս եմ մեծացնում իմ ձա-
գուկներին, նրանց համար կերակուր բերում,
թոշել եմ սովորեցնում և թողնում եմ ազատ
միայն այն ժամանակ երբ նրանք իմ օգնութեան
այլ ես կարօտ չեմ։

—Այս, սանահայր, որքան մեծ հոգս են
նրանք մեզ համար, որտեղից գտնել այդքան կե-
րակուր. ամբողջ օրը պէտք է թոշել, մըջիւններ,
ճանճեր, թիթեռներ բոնել նրանց կերակրելու
համար. իսկ ես սիրում եմ լինել ազատ, ուրախ,
սիրում եմ լինել ամեն տեղ, գնալ թոշունների
հարսանիքներին։ Ժամանակ չունիմ ձագուկներ
պահելու և մեծացնելու։

—Դրա համար էլ ամենքը քեզ նախատում
են, պատասխանեց բուն. իսկ ես այժմ լսել ան-
գամ չեմ ուզում քեզ. կորիր, հեռացիր և ինչ-
քան ուզում ես բղաւիր այստեղ, միայն հանդիսա
թող ինձ. ես ուզում եմ քնել։ Իսկ եթէ պիտի
բղաւես ականջիս տակ, քեզ կըկտցահարեմ։

Կրոն վախեցաւ, չար պառաւ անուանեց
բուին, այնուամենայնիւ թուաւ, գնաց, որովհե-
տե բուի կտուցը շատ սուր է. կկուն չէր կարող
նրան յաղթել։

Բուն կըկին մտաւ իւր մութ խոռոշը, փա-
կեց աչքերը և ուզում էր նորից քնել, բայց այս
անդամ էլ չյաջողուեց նրան. հինց նոր էր աշ-

քերը փակել, մէկ էլ մի այնպիսի երաժշտու-
թիւն սկսուեց, որ բուիկը բոլորովին արթնա-
ցաւ, զուրս նայեց և տեսաւ, որ երաշտահաւերի
մի ամբողջ խումբ նստած են ծառի ճիւղերի
վրայ և բոլոր ուժով երգում են։

Հեռո՛ւ այստեղից, շատախօս թոշնիկներ,
ինչո՞ւ այդպէս բղաւում էք և չէք թողնում ինձ
քնելու։

Երաշտահաւերը նայեցին բուի ծիծաղելի
գլխին և աւելի բարձր կըկչացին, կարծես ծի-
ծաղում էին։

—Այ թէ ուրախացրիր զու մեզ, մոխրագոյն
բուիկ, հիմա ինչ քնելու ժամանակ է։ Նայիր,
արեգակը արդէն բարձրացել է, բոլոր թոշուն-
ները և գազանները վաղուց արթնացել են. մենք,
երաշտահաւերս արդէն նախաճաշել ենք, իսկ
այժմ միասին ուրախ երգում ենք մեզ համար։
Փառք Աստուծոյ, լաւ եղանակ է. ուտելիք երե-
կոյեան էլ շատ կըկինի։ Ինչո՞ւ յուսահատուենք,
պէտք է ուրախանանք, զուարձանանք. քնել զի-
շերն էլ կարող ենք։

—Ում ինչպէս յարմար է, ասաց բուն. ես
ամբողջ գիշերը աշխատեցի, իսկ հիմա ուզում
եմ քնել և ձեզ կարտաքսեմ այստեղից։


—Մենք գիտենք քո աշխատանքը, պատա-
խանեցին երաշտահաւերը։ Ահա խեղճ մշահաւը
թիի վրայ նստած ողբում է իւր ձագուկների կո-
րուստը։ Անպատճառ զու կերար նրանց, չար բու։

—Ես եմ թէ ոչ, դա ձեզ գործը չէ։ Այ հիմա
դուքս կը թոշեմ խոռոշից և դուք այն ժամանակ
կը տեսնէք իմ սուր կտցի ու ճանկերի ուժը։

—Մենք ցերեկով այնքան էլ չենք վախե-
նում քեզանից, կրկչացին երաշտահաւերը. մենք
քեզ լաւ ենք ճանաշում. ցերեկով դու համարեա
կոյը ես. դուքս ես թոշում, միայն կտուցովդ
շնչխկացնում ես, իսկ մեզ չես էլ նկատում։
Մենք քեզանից զիշերն ենք վախենում, երբ դու
կամացուկ թոշում ես և ծածուկ նայում ես
բների մէջ. ահա այն ժամանակ միայն մենք քեզ
չենք կարող յաղթել։ Է՞հ, ինչ հարկաւոր է լսել
նրան. եկէք, քոյրիկներ, նոր երգ երգենք և ա-
ռաջինից էլ աւելի բարձր, որպէս զի բուիկը
չկարողանայ քնել. դուցէ այն ժամանակ նա զի-
շերը քնի և մեզ հանգիստ թողնէ։

Բուիկը սասատիկ նեղացաւ, և չնայելով լոյ-
սին, պատրաստում էր դուքս թոշել և վախեցնել
յանդուզն թոշուններին, բայց նրա բազդից այդ
միջոցին անտառով անցաւ զիշակեր անգղը։
Երաշտահաւերը անգղից շատ են վախենում.
Նրանք մոռացան բուի երկիւղը և ոստոստեցին
ու թուան անտառի միւս կողմը։ Բուն շնորհակալ
եղաւ անգղից նորից քաշուեց խոռոշի խորըը
և խոր քնեց։

Սակայն նա երկար չքնեց. կրկին անյաջո-
ղութիւն. Մի բարձր թըխկ-թըխկոց նրան արթ-
նացըեց։ Բուն բարկացած շուռ եկաւ, դուքս



նայեց խոռոչից և տեսաւ, որ մի բաւական մեծ
կարմրակատար թռչուն կախուել էր ծառից ճան-
կերով և երկար ու պինդ կտուցով թխթխկաց-
նում էր.—թը՛խկ—թը՛խկ, թը՛խկ...

—Այդ ով է թըխկացնում:

—Ես եմ, կտցահարը:

—Ինչու ես թըխկթըխկացնում և անհան-
գըստացնում ինձ:

—Ինչպէս թէ ինչու, ուտել եմ ուզում. տես-
նում ես կեղեի որքան մեծ կտորներ իմ կտու-
ցով արդէն պոկել հանել եմ. կեղեի տակի փայտը
փթած է, իսկ այնտեղ կան զանազան փոքրիկ
բղեգներ ու որդեր: Ես նրանց հանում եմ իմ սուր
լեզուով և կուլ եմ տալիս:


—Բայց դու քո թըխթըխկոցով խանգարում
ես քունս. բղաւեց բուն:

—Ճատ հարկաւոր է, պատասխանեց կըտ-
ցահարը. մեղնից ամեն մէկը մի տեսակ է կե-
րակրում. ես քո պատճառով ծառի վրայի լաւ
տեղը աշքից բաց թողնեմ:

—Ահա այն կողմից էլ փթած տեղ կայ.
Ես այնտեղ էլ կըթըխթըխկացնեմ:

Ճար չկար. կտցահարին չէր կարելի վա-
խեցնել. նա կարող էր խիստ վիրաւորել բուին.
Նրա կտուցը սուր է:

Բուն ստիպուած էր լսել կտցահարի թըխ-
թըխկոցը, մինչև նա կըհանէր ծառի վրայի բոլոր
փթած տեղերը: Փընթվնթաց բուն, փնթփըն-



թաց, բայց քնել չկարողացաւ: Սակայն շուտով
կերջացաւ նրա տանջանքը: Կտցահարը մեծ եռան-
դով քըքըեց ամբողջ ժառը, սողալով պտոյտ ա-
ըեց նրա շուրջը և ապա թռաւ միւս ժառի վրայ:
Բուն կրկին աեղաւորուեց խոռոշում և քնեց.
սակայն շուտով նրան նորից արթնացըին: Յան-
կարծ մէկը ինչ-որ սուր բանով նրա գլուխը
ծակեց:

Բուն աղաղակեց:

—Վայ, վայ, վայ, ցաւում է. ով է կուռու՞
ինձ հետ:

—Ես, սև ագռաւն եմ. մթնումը քեզ չնկա-
տեցի էլ. միայն այս ըոպէիս տեսայ:


—Բայց ինչ ես ուզում:

—Ես նայեցի խոռոշի մէջ և մտածում էի.
թէ արդեօք չկայ այստեղ մի որևէ թռչնիկ, որ
ուտեմ. բայց քանի որ դու այդտեղ նստած ես,
սանամայը, ոչ մի ուտելիք չի գտնուի եթէ լի-
նէր էլ, դու ինձնից շուտ կերած կրկինէիր: Քնիր
քեզ համար: Մենք քեզ հետ կռուելու ոչինչ չու-
նինք: Դեռ յայտնի չէ, թէ ով ում կըյաղթէ. ես
կըթոշեմ ուրիշ տեղ:

Ազուափի թռչելուց յետոյ բուն երկար փրնթ-
փրնթաց, որովհետև գլուխը սաստիկ ցաւում էր:

Վերջապէս նա հանգստացաւ և խոր քոնն
մտաւ: Նրան յաջողուեց քնել մի ամբողջ ժամ:

Սակայն ստիպուած էր նորից գարթնելու:
Մէկը ինչ-որ փափուկ բանով խտացնում



Էր նրա կտուցը: Բուիկը բարկացած փոշտաց,
աչքերը ձիգ բացեց և տեսաւ, որ սկիւռը խո-
ռովի մէջ նստած է և իւր բրդոտ պոչով հովհա-
րում է բուի քիթը: Այրի բուիկը կտուցով քըթ-
քըթացրեց և ուզում էր բոնել սկիւռի պոչից,
բայց նա արագութեամբ շուռ եկաւ և ցոյց տուեց
բուին իւր սուր ատամերը:

—Ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ մտար ուրիշի բունը:

—Ինչպէս թէ ուրիշի, պատասխանեց սկիւռը.


ախը դա իմ բոնն է. ես այստեղ պահել, մե-
ծեցրել եմ ձագուկներիս և ապա տարել եմ նրանց
ուրիշ տեղ: Իսկ հիմա կրկին ուզում եմ բերել
այստեղ. իմ նոր բոնը նրանց համար նեղուածք
է. դու կորիր այստեղից, բո՛ւ, դու երբէք չես կա-
րող այստեղ ապել:

—Դո՞ւ կորիր այստեղից. հէնց կարծում ես
ես քեզ հաւատացի, ինչո՞վ ես հաստատում, որ
այս բոնը քոնն է:

—Ահա թէ ինչով, ասաց սկիւռը, սկսեց
փորեր բուի յետելը, հրեց նրան կանգնած տեղից
և դուրս հանեց նրա տակից միքանի ընկոյզ:

—Տեսնո՞ւմ ես. այստեղ է գտնում իմ պա-
շարը. բացի ինձացին ոչ ոք չգիտէ թէ այստեղ
ընկոյզներ են պահուած: Կնշանակէ բոնը իմէ,
իսկ դու, չարասիրտ անպիտան, հեռացիր այս-
տեղից:

—2եմ գնա, բարկացած բղաւեց բուն:
Ինչպէս ես համարձակում դու ինձ հրել այս-




տեղից և տանտէրութիւն անել: Ես ուզում եմ
քնել, և դու չես կարող ինձ այստեղից վռնդել:
Ես քեզ կըկրցահարեմ և կըճանկուտեմ: Եւ բուն
պատրաստում էր կռուել սկիւռի հետ: Նա պառ-
կեց մէջքի վրայ, իւր սուր ճանկերն ու կեռ
կտուցը ցցեց դէպի վեր. իսկ սկիւռը կըճտաց-
րեց իւր սուր ատամները, ճանեց երկարացընց
առաջի թաթերը, որպէս զի ճանկոէր, փորէր բուփ
մեծ-մեծ աշքերը: Բայց յանկարծ սկիւռը մի
խշշոց լսեց. արագութեամբ դարձաւ և նայեց
խոռոչի ծակից:

—Ե՛, բովիկ, կռուելու ժամանակ չէ. մեր
ծառի վերայ բարձրանում է աքիսը. Ես չեմ ու-
զում նրա ճանկն ընկնել: Մնաս բարեաւ:

Սկիւռը մի ակնթարթում դուրս թռաւ խո-
ռոչից: Մեծ ոստիւններով սկսեց բարձրանալ
ծառի ամենաբարձր ծայրը, ուր ճիւղերը բարա-
կեն և որտեղ աքիսը չի կարող հասնել:

Բուն ես շուգեց պատահել աքիսին. այս
փոքրիկ գագանը սաստիկ ուժեղ է և ունի սուր
ատամներ: Բուն զիտէր, որ նա մի ակնթարթում
կըկրծուէր իրան:

Ճար չկար. պէտք էր հեռանալ խոռոչից և
հրաժարուել քնելուց. ուստի բուն դուրս եկաւ
խոռոչից և թռաւ, ուր աշքը կտրում էր: Բայց
պայծառ արեգակը բոլորովին կուրացընց նրան.
Նա չկարողացաւ հեռու թռչել և շուտով նստեց
անտառի մէջ մի փոքրիկ թփի վրայ: Բուն այդ-



տեղ վախեցրեց և վախցրեց միքանի մանր
թռչունների. իսկ այդ թռչունները նստեցին մօ-
տակայ թփերի վրայ և շրջակայքի բոլոր թռչ-
ուններին պատմեցին անտառում բուի երևալը:


Սկսուեց խաղը.—ամբողջ անտառից հաւա-
քուեցին երաշտահաւերը, արքայամորիները, ոս-
կէզօծ դրախտահաւերը, գեղին սարեակները և
կարմրատոտիկները: Նրանք ամբողջ խմբերով
շրջապատեցին բուին և սկսեցին նրան բարկաց-
նել և կտրցել:


Տեսէք, քոյրիկներ, այս յիմար մոխրագոյն
թռչունին. սա չար բուն է, որ գիշերները մեզ
վախեցնում է և մեզանից շատերին ուտում:

—էյ, սանամայր, հիմա մեր ճանկն ընկար:
Յերեկով դու ոչինչ չես տեսնում և չես համար-
ձակուի մեզ դիպչել: Այսօր դու մեզանից քո պա-
տիժը կրստանաս:

Մենք քեզ կը փետրենք և աչքերդ կը հա-
նենք:

Եւ յիրաւի, թռչուններն այնպէս շրջապա-
տեցին բուին, այնքան եռանդով նրան կտցա-
հարեցին և փետրեցին, որ նա չգիտէր թէ, որ
կողմը դառնար: Բուն կուչ եկաւ, կտուցով չըխ-
շխցկացրեց, փոշտաց, աչքերը ճպճպացրեց,
բայց թռչնիկները չէին հեռանում նրանից: Այս
աղմուկից նրանց մօտ թռան աւելի մեծ թռչուն-
ներ. սարեակներ, ճայեր, ագռաներ և խառ-
նուեցին կուրի մէջ: Բուն տեսաւ, որ իւր բանը






22

բուրդ է, շտապեց ազատուել: Դժուարութեամբ շարժելով ճմլուած թևերը, նա բարձրացաւ թռաւ անտառի ամենախիտ տեղը: Մանրիկ թռչունները երկար յետենեցին նրան, ճռուողեցին, կըգմտեցին, կըտկրտեցին, բայց շուտով յետ մնացին և վերադարձան իրանց սովորական տեղը, ուր շատ մըժեղներ են լինում:

Իսկ բուն թռաւ անտառի ամենամուլթ տեղը. այնտեղ կային շատ մեծ քարեր. նրանց վրայ ընկած էր փոթորկից կոտրուած մի մեծ մայրի. այս ծառի ճիւղերի տակ բուն դտաւ մի այնպիսի խուլ անկիւն, ուր ոչ մի ուրիշ թռչուն չէր կարող ընկնել: Բուն տեղաւորուեց այդտեղ, երկար ժամանակ ուղղեց իւր զզզուած փետուրները. վերջապէս հանգստացաւ և մինչև երեկոյ քննեց:



23



ՀՀ Ազգային գրադարան



NL0376961

310.

